



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման
ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կապանի մեկ հիմնական

Թեմա՝ Միջառարկայական կապերի հաստատումը ռուսերենի
դասավանդման գործընթացում

Վերապատրաստող, մենթոր՝ Լուսինե Բալայան

Ուսուցիչ՝ Լարիսա Խոսրովյան

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	2
ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՈՒՄ, ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ	4
1.1 ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ	4
1.2 ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ	8
ԳԼՈՒԽ 2. ՌՈՒՍԵՐԵՆ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ..	13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	22
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Միջառարկայական կապերի կիրառումը միշտ եղել ու կլինի արդիական:

Ուսումնական գործընթացի կազմակերպման գործում մեծ նշանակություն ունեն միջառարկայական կապերը:

Սովորողը գիտակցում է, որ այն նյութը, որը մատուցում է նրան ուսուցիչը կապված է այլ առարկաների հետ: Ուսուցման ընթացքում որևէ առարկայի կիրառումը թույլ է տալիս ոչ միայն զարգացնել սովորողի հետաքրքրությունը, զարգացնել նրա մտահորիզոնը, այլև հնարավորություն է տալիս ստացած գիտելիքների ավելի խորը յուրացմանը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ցույց տալ օտար լեզուների փոխադարձ կապը ուսուցման ընթացքում, գտնել երկու լեզուների ընդհանրություններն ու տարբերությունները:

Հետազոտության խնդիրներն են.

- բացահայտել միջառարկայական կապերի կիրառման արյունավետությունը
- պարզել որոշ խոսքի մասերի ընդհանրություններն ու տարբերությունները ռուսերենում և անգլերենում

Հետազոտության օբյեկտը խոսքի մասերն են, նրանց կապը, նմանատիպ հատկանիշները:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից: Ներածության մեջ բացահայտվում են հետազոտվող թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները: Առաջին գլխում ներկայացվում են ինտեգրման տեսակները, միջառարկայական կապի սահմանումը, դերը: Երկրորդ գլխում ներկայացվում է ռուսերենի կապը այլ առարկաների հետ, մասնավորապես անգլերենի հետ: Եզրակացության մեջ ներկայացվում են միջառարկայական կապերի կարևորությունը, ռուսերենի և անգլերենի կապը, լեզուների տարբերություններն ու ընդհանրությունները:

ԳԼՈՒԽ 1. ԻՆՏԵԳՐՈՒՄ, ՄԻԶԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ

1.1 ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

«Զուգորդական (ասոցիատիվ) մտածողություն» գաղափարի էությունն այն է, որ յուրաքանչյուր գիտելիք կարելի է ձեռք բերել զուգորդությամբ, քանի որ գիտելիքների համակարգը զուգորդությունների համակարգ է:

Յու.Ա.Սամարին

Ուսուցումը հենվելով առարկայական ուսուցման՝ դարերով մշակված և կատարելագործված ուսումնական ծրագրերի կազմման սկզբունքների վրա, անհրաժեշտ է համարել ինտեգրել, ամրապնդել, ընդլայնել տարբեր առարկաների փոխադարձ կապը, որի ամբողջական ճանաչողությունը ենթադրում է համապատասխան գիտելիքների միավորում: Գիտելիքների միավորումը հիմնական ուղի է իմացության մեջ, քանի որ դրանով ապահովվում է իրականության երևույթների նկատմամբ համակարգային մոտեցման դրսևորումը: [3]

Ուսումնական առարկաների ինտեգրումը թույլ կտա նվազեցնել ուսուցման բովանդակության և հմտությունների կրկնությունը, ավելի շատ սովորեցնել, նոր պատկերացում ձևավորել հիմնական հմտությունների նշանակության մասին, իրականության տարբեր երևույթների տեղայնացված, մեկուսի դիտարկումից անցնել փոխկապակցված, համակարգված ուսումնասիրության: Ելնելով առկա պատկերացումներից, նշենք, որ ինտեգրումը որոշակի ուսումնական բնագավառների նպատակաուղղված միավորում է: [3]

«Ինտեգրում» եզրույթը մեր պատկերացմամբ, մի քանի իմաստներ կարող է ունենալ:

Առաջին՝ «ինտեգրումը» երեխայի մեջ շրջապատող աշխարհի մասին ամբողջական պատկերացման ստեղծումն է: Ինտեգրման արդյունքում երեխան ձեռք է բերում այն գիտելիքները, որոնք արտացոլում են շրջապատող աշխարհի (որպես համակարգ) առանձին մասերի միջև գոյություն ունեցող կապը: Հենց առաջին

քայլերից երեխան աշխարհը պատկերացնում է իբրև մի ամբողջություն, որտեղ բոլոր տարրերը փոխադարձաբար կապված են:

Երկրորդ՝ «ինտեգրումը» առարկայական գիտելիքները մի ընդհանուր առանցքի վրա դնելն է: Այս դեպքում ինտեգրումն ուսուցման միջոց է:

Երրորդ՝ ինտեգրումը դիտարկվում է որպես պայման՝ աշակերտների ընդհանուր զարգացման մեջ:

Ինտեգրման խնդիրն արդիական է ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումներով:

- Ինտեգրված դասերը նպաստում են աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, բնության, հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների միջև կապերի բացահայտմանն ու ընկալմանը:
- Ինտեգրումը հենց գիտական կապերի մերձեցման գործընթաց է, որն ուղեկցվում է տարբերակված ուսուցմամբ: Ինտեգրման գործընթացը միջառարկայական կապերի բարձրագույն ձև է և ուսուցման որակապես նոր աստիճան:
- Ինտեգրումը հնարավորություն է տալիս իրականության տարբեր երևույթների տեղայնացված, մեկուսի դիտարկումից անցնել փոխկապակցված, համակարգված ուսումնասիրության:
- Ինտեգրումը առաջացնում է հետաքրքրություն ուսման նկատմամբ, բարձրացնում է նրա իմացական կարողությունների մակարդակը: [3]

Այսպիսով, ինտեգրումը ոչ թե պարզապես մեխանիկական միացում է ամբողջի մեջ, այլ համակարգ, որը հանգեցնում է որակական փոփոխությունների, հետևաբար այն տարբեր աստիճաններ պետք է ունենա: Ըստ մտածողների՝ ինտեգրումը կարող է լինել ներառարկայական և միջառարկայական: Այնուհետև այդ դասակարգմանն ավելացրել են նաև արտառարկայական ինտեգրումը: Այսպիսով, տարբերում են ուսումնական նյութի ինտեգրման երեք աստիճան՝

ա) ներառարկայական ինտեգրում (interdisciplinary)

բ) միջառարկայական ինտեգրում (multidisciplinary)

գ) արտառարկայական ինտեգրում (հիմնական և լրացուցիչ կրթության բովանդակության մեկտեղում) (trans disciplinary) [Աստվածատրյան 2003:17]

Այս դեպքում ևս հիմնական խնդիրն է՝ ամբողջացնել ու համակարգել սովորած գիտելիքները և դրանց հիման վրա կատարել ընդհանրացումներ: Ինչ վերաբերում է այն կապերին, որոնք ստեղծվում են արտաուսումնական գործունեության ընթացքում, ապա՝ կարելի է ասել, որ դրանք չափազանց տարբեր են իրենց բովանդակությամբ, բազմազան՝ աշակերտի արտաուսումնական գործունեության մեջ: [1]

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այդպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներն ու մեթոդներ: [Чепиков 1988:135]

Տարբեր է ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելաբար օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ: Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այդպիսի դասի կադմակերպմամբ կարելի է ընդլայնել ինֆորմացիան, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման: [Данилюк 1997:89]

Ինտեգրված դասերը հատկապես գրավիչ են դպրոցականների և ուսանողների համար. Նրանք, որտեղ դպրոցական ցիկլի երկու կամ ավելի առարկաներ կապված են: Դրանք թույլ են տալիս կայուն հետաքրքրություն ձևավորել, ցույց են տալիս, որ առարկաները փոխկապակցված են և խրախուսում են գիտելիքի որոնումը:

Ինտեգրված դասերի ձևերը շատ բազմազան են՝ նոր նյութի ավանդական հաղորդակցումից և հետագա գործնական գործողություններից՝ ճանապարհորդելու, վիկտորինաների, ԿՎՆ- ների և մրցույթների համար: [4]

Ինտեգրված դասերի կառուցվածքը տարբերվում է պարզությամբ, կոմպակտությամբ, դասի յուրաքանչյուր փուլում ուսումնական նյութի տրամաբանական փոխկապակցվածությամբ, նյութի մեծ տեղեկատվական հզորությամբ: Ինտեգրված դասերի տեսքով նպատակահարմար է անցկացնել դասերի ընդհանրացում, որը կբացահայտի երկու կամ ավելի առարկաների համար առավել կարևոր խնդիրները: [5]

1.2 ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Դպրոցում երեխան պետք է ունենա համակարգված և ամբողջական ընկալում բնության և դրա երևույթների վերաբերյալ: Անհրաժեշտ է, որ նա առարկան և երևույթը քննի տարբեր կողմերից՝ զգայական, գեղարվեստական, գիտական և այլն: Շարունակ փոխում է գործունեության ոլորտը, որն էլ հետաքրքիր է դարձնում աշխատանքը: Առարկաների միջև կապերն ավելի ու ավելի են սերտանում, լրացնում միմյանց ու նպաստում երևույթի բազմակողմանի (տարբեր առարկաների տեսքով) դիտարկմանը և ընկալմանը:

Գիտելիքների միավորումը և համադրումը տեղի են ունենում տարբեր եղանակներով: Այն դեպքում, երբ կապեր են ստեղծվում տարբեր ուսումնական առարկաներին վերաբերող գիտելիքների միջև, ընդունված է անվանել միջառարկայական կապեր: [3]

- Միջառարկայական կապերին դիմելը Կոմենսկին համարում էր «գիտություններից մեծ հարստություններ ձեռք բերելու» լավագույն միջոց և գտնում էր, որ «Այն ամենը, ինչը փոխադարձաբար կապված է, նույնպիսի կապի մեջ էլ պիտի դասավանդվի»:
- Ի.Հ.Պեստալոցին լուրջ վտանգ էր տեսնում առարկաները «տարանջատելու» մեջ:
- Ռուս ականավոր մանկավարժ Կ.Գ.Ուշինսկին միջառարկայական կապերի ստեղծումն ու կենսագործումը համարում էր արդյունավետ ուսուցման կարևորագույն նախապայմաններից մեկը:
- Փիլիսոփա, մանկավարժ Ջոն Դյուն առաջ քաշեց ուսումնական ծրագրերի կառուցման նոր սկզբունք, համալիր թեմաներ, այսինքն՝ տարբեր բնագավառների, տարբեր երևույթների միջև գոյություն ունեցող իրական կապերը հասկանալու, ընդլայնում է դպրոցականի մտահորիզոնը և ձևավորում հնարավորին չափով ամբողջական աշխարհայացք:

Միջառարկայական կապերը նպաստում են տարբեր ուսումնական թեմաների (կամ գիտելիքների) միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, իսկ

ներառարկայական և ներդասընթացային կապերը նման դեր են կատարում տվյալ առարկայի ներսում: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ նոր նյութն ուսումնասիրելու ժամանակ ուսուցիչն օգտագործում է աշակերտների այն գիտելիքները, որոնք ձեռք են բերվել նախորդ դասարանում և տրամաբանորեն կապվում են նոր գիտելիքների հետ, նպաստում դրանց յուրացմանը:[3]

Միջառարկայական կապերի նպատակային օգտագործումը պետք է.

- պարտադիր լինի բոլոր ուսուցիչների համար,
- լինի միայն ուսումնական նպատակին հասնելու միջոց,
- գործադրվի միայն այն ժամանակ, երբ դրա անհրաժեշտությունը կա,
- ինքնանպատակ չլինի,
- զուգակցված լինի ուսուցման դասական ձևերի հետ,
- դասի հիմնական նպատակից չչեղի աշակերտների ուշադրությունը:


Ուսուցման գործընթացում միջառարկայական կապեր ստեղծվում են տարբեր եղանակներով: Օրինակ՝ ուսուցիչը դասի ընթացքում նոր նյութը պատմելիս կամ բացատրելիս աշակերտներին հիշեցնում կամ հարցնում է, թե մյուս առարկաներից իրենք ինչ գիտեն տվյալ երևույթի վերաբերյալ: Ուսուցիչը, հիմնվելով աշակերտներին հայտնի գիտելիքների վրա, աշխատում է նոր նյութը կամ գիտելիքները հասկանալի դարձնել, ստեղծել ուսումնասիրվող երևույթի համակողմանի, ամբողջական պատկերացում: [3]

Միջառարկայական կապերն ամենևին էլ չեն սահմանափակվում միայն նշված առարկաներով: Այդպիսի կապերը գոյություն ունեն համարյա բոլոր դպրոցական դասընթացներում: Չէ՞ որ օբյեկտիվորեն գոյություն ունեցող երևույթները և փաստերը կարող են ընկալվել ու ուսումնասիրվել միայն միմյանց և այլ երևույթների հետ փոխադարձ կապի և փոխգործողության մեջ: Միջառարկայական կապերը լավ պատկերացնելու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր թեմա ուսումնասիրվի բոլոր կողմերից, տարբեր կապերի բացահայտման տեսանկյունով: Այսպես կարող է իրականանալ ուսուցման ինտեգրումը: [3]

Միջառարկայական կապերը թույլ են տալիս սովորողին զարգացնել Time management- ժամանակի կառավարում կոչվածը, այսինքն միառժամանակ կապել երկու կամ ավելի առարկաներ:

Օրինակ գրականության ուսուցիչը «Աննա Ֆրանկի օրագիրը» ստեղծագործությունը ներկայացնելիս կխոսի ժանրի մասին, գլխավոր հերոսների բնութագրերի մասին, իսկ պատմության ուսուցիչը կներկայացնի Երկրորդ համաշխարհային պատերազմը: [6]

Միջառարկայական կապերի հաստատումը թույլ է տալիս, որ սովորողը այլ առարկայից, այլ ոլորտից գիտելիքներ ստանա, համեմատություններ անի: Այն եզակի կրթական մեթոդ է: Օրինակ՝ ինժեներական ֆակուլտետի ուսանողը կարող է իր ուսումնական նյութը կապի հումանիտար առարկաների հետ:



Միջառարկայական կապերի մասին Յ.Ա.Կոմենսկին իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նշում է, որ ուսումնական առարկաների փոխկապակցված ուսուցումը երեխաներին սովորեցնում է բացահայտել ուսումնասիրվող

առարկաների և երևույթների միջև եղած կապերը. «Ամեն ինչ ամրապնդել բանականության հիմունքներով նշանակում է ամեն ինչ սովորել՝ մատնացույց անելով պատճառները, այսինքն՝ ոչ միայն ցույց տալ, թե ինչպես է այս կամ այն բանը տեղի ունենում, այլ նաև ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող: Չէ՞ որ իմանալ որևէ բան նշանակում է իրը ճանաչել իր փոխկապակցվածության մեջ»: [7]

Միջառարկայական կապերի պահպանումը ժամանակակից դպրոցում ուսուցման կարևորագույն սկզբունքներից մեկն է: Այն ապահովում է բնագիտական և հումանիտար առարկաների փոխադարձ կապը:

Միջառարկայական կապերի իրագործման հաջողությունն ապահովող կարևոր հանգամանք է նաև ուսուցչի՝ դասին մանրակրկիտ պատրաստվելը: Միջառարկայական կապերի իրագործման արդյունքում կազմավորվում է գիտելիքները մի ընդհանուր համակարգում ընդգրկելու, հիշողության մեջ ամբողջական կայուն գոյացություն ձևավորելու կարողություն: Կարելի է առանձնացնել դասին միջառարկայակն կապերի իրագործման ձևերից հետևյալները.

- տնային հանձնարարություն այլ առարկաներից
- վիկտորինաներ, թեմատիկ երեկոներ
- միջառարկայական բովանդակությամբ միջոցառումներ (կոնֆերանս, բանավեճ, օլիմպիադա և այլն), որոնք անց են կացնում երկու առարկաների ուսուցիչներ

Դասի պլանավորման ընթացքում առաջարկվում է անհրաժեշտ տեղեկատվության հավաքման և համակարգման մի քանի կետ, որոնց նա պետք է ուշադրություն դարձնի.

1. որտեղ է (դասագրքում կամ կայքում) անհրաժեշտ նյութը
2. հարակից առարկայում երբ է ուսումնասիրվում տվյալ նյութը
3. հարակից առարկայի նյութի համառոտ նկարագրությունը

4. ինչ մեթոդ է նպատակահարմար կիրառել հարակից առարկայի նյութին անդրադառնալիս

5. հետագայում որ առարկայում կարող է օգտագործվել տվյալ առարկայի նյութը

Դասին ուսուցչի բարձր մակարդակով նախապատրաստվելու ցուցանիշներից մեկը դասանյութի համակողմանի վերլուծությունն է, որի ժամանակ տնային հանձնարարությունները տրվում են , պահանջելով՝ հենվելով մի առարկայից յուրացրած գիտելիքների վրա, բացատրել այն փաստերն ու երևույթները, որոնց ուսուցանվում են այլ դասընթացներում: [8]

ԳԼՈՒԽ 2. ՌՈՒՍԵՐԵՆ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Միջառարկայական կապերը շատ կարևոր են և անհրաժեշտ դասավանդման ընթացքում: Միջառարկայական կապը թույլ է տալիս զուգահեռներ տանել երկու և ավելի առարկաների միջև: Ռուսաց լեզու առարկան կարելի է կապել շատ առարկաների հետ, ինչը հեշտացնում է ուսուցչի և աշակերտի աշխատանքը:

Ուսուցիչի նպատակներից են զարգացնել սովորողների կոմունիկադիոն ընդունակությունները: Այդ նպատակով ուսուցիչները օգտագործում են տեղեկության ներկայացման տարաբնույթ մեթոդներ, որոնցից է միջառարկայական կապերը: Մանկավարժական գրականության մեջ միջառարկայական կապը համարվում է ուսուցման միջոց: Այդ տեսակ դասերի շնորհիվ բարձրանում է սովորողների մոտիվացիան, հեռաքրքրություն է առաջանում առարկայի հանդեպ, զարգանում է սովորողների խոսքը: Աշակերտները փոխանակում են իրենց գիտելիքները, զուգահեռականներ են անցկանում տարբեր գիտությունների միջև, հարստացնում են իրենց բառապաշարը:

Ռուսերենը ունի կապ շատ առարկաների հետ, մասնավորապես լեզուների հետ: Օտար լեզվի ուսուցիչը պետք է նախ լավ տիրապետի իր մայրենի լեզվին և այլ լեզուներին, որպեսզի համեմատական վերլուծություն անցկացնի և նոր նյութը մատուցելիս նախ այն բացատրի մայրենի լեզվով, հետո արդեն դասավանդվող լեզվով:

Դասի պլանի կարևոր կետերից են միջառարկայական կապերը մեկ կամ ավելի առարկաների հետ: Օրինակ ռուսերենի քերականության ժամերին հնարավոր է միջառարկայական կապ հաստատել հայերենի և անգլերենի հետ կամ ռուս գրականության ժամերին տեքստի մի հատված թարգմանել հայերեն և անգլերեն, համեմատական անալիզ կատարել, ուշադրություն դարձնել դարձվածքների, թևավոր խոսքերի թարգմանությանը, նախադասության շարադասությանը այլ լեզուներում և բնագրում: Այդ տեսակ դասերը ավելի արդյունավետ կլինեն և հնարավորություն

կտան աշակերտին գիտելիքներ ստանա ոչ միայն տվյալ առարկայից, այլև այլ առարկաներից նույնպես:

Բերենք մի քանի առարկաների կապը ռուսաց լեզվի դասվանդման ընթացքում:

1. Կապը գրականության հետ. Ռուսաց լեզվում մենք անցնում ենք հոմանիշներ, հականիշներ, դարձվածքներ, իսկ գրականության մեջ մակդիրներ, անձնավորում, փոխաբերություն
2. Կապը աշխարհագրության հետ. Ռուսաց լեզվում անցնում ենք տեղանունների գրությունը, բացատրում ենք անեզական և անհոգնական գոյականներ, օր. Ալպեր, իսկ աշխարհագրությունում անցնում ենք Ալպերի և Ալպյան լեռնաշղթայի մասին
3. Կապը մաթեմատիկայի հետ. Թվական անուն, թվականի տեսակները (քանակական, կոտորակային, բաշխական, դասական)
4. Կապը երաժշտության հետ. Որոշ կոմպոզիտորների կենսագրություն և նրանց հայտնի ստեղծագործությունները
5. Կապը նկարչության հետ. Որոշ նկարիչների կենսագրություն և նրանց հայտնի գործերը
6. Կապը կենսաբանության հետ. բույսերի, կենդանիների մասին դասեր ռուսերենում և նրանց մասին տեղեկություններ
7. Կապը պատմության հետ. գրականության դասերում պատմական կարևոր իրադարձությունները, հայտնի պատմական դեմքերի, թագավորների անուններ
8. Կապը հայերենի հետ. քերականության բաժինները ռուսերենում և հայերենում (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն)
9. Կապը անգլերենի հետ. քերականության բաժինները ռուսերենում և անգլերենում

Անհնար է պատկերացնել ռուսերենի կապը առանց այլ լեզուների, քանի որ նոր նյութը բացատրելիս ուսուցիչը սկզբից անդրադառնում է այդ թեմային, որը աշակերտը արդեն անցել է հայոց լեզվին հետո զուգահեռ բացատրում նար անգլերենում: Լեզուներն ունեն շատ ընդհանրություններ և տարբերություններ, ինչը անհրաժեշտ է ցույց տալ երեխաներին տվյալ թեման ներկայացնելիս: Առանց հայոց լեզվի քերականությունն իմանալու անհնար է հասկանալ օտար լեզվի քերականությունը: Ուսուցիչը միջառարկայական կապ հաստատում է քերականության բաժինների ուսումնասիրության ժամանակ:

1. Բառագիտություն. Նոր տեքստին ծանոթանալիս մենք այն սկզբից թարգմանում ենք, այսինքն կատարում ենք բառային աշխատանք. Տալիս ենք տվյալ բառի թարգմանությունը, ներկայացնում ենք տվյալ բառի հոմանիշներն ու հակահիշները: Երեք լեզուներում էլ գտնում ենք բազմաթիվ փոխառություններ: Հայերենում, ռուսերենում և անգլերենում կան մի շարք փոխառություններ: Ռուսերենում կան շատ փոխառություններ, որոնք եկել են այլ օտար լեզուներից, այդ թվում անգլերենից: Մենք հեշտությամբ կարող ենք թարգմանել hobby, radio, restaurant, profession, student: Շատ հեշտ է հիշել այդ բառերի արտասանությունն ու թարգմանությունը: Երեխաներին մեծ հետաքրքրություն են առաջացնում այն տիպի առաջադրանքները, որտեղ պահանջվում է համապատասխանեցնել էկվիվալենտ (համարժեք) բառերը: Ռուսերենի և անգլերենի նմանությունը վկայում են մի շարք բառեր, որոնց նման են իրար արտասանությամբ. Вода-water, сестра-sister, соль-salt, молоко-milk:

2. Ձևաբանություն. Խոսքի մասերն անցնելիս մենք այն թարգմանում ենք հայերեն, անգլերեն և ներկայացնում յուրաքանչյուր խոսքի մասի առանձնահատկությունները երեք լեզուներում: Օրինակ դերանուն- местоимение-pronoun թեման անցնելիս մենք ընդհանրություն ենք գտնում ռուսերենի և անգլերենի դերանունների հետ, օրինակ՝ նա դերանունը, որը հայերենում մատնանշում է և արական, և իգական սեռը, իսկ ռուսերենում և անգլերենում այն ունի երկու առանձին բառ, որից մեկը մատնանշում է արական սեռը, մյուսը՝ իգական. он/ она, he/ she. Տարբերությունը ռուսերենում և անգլերենում այն է, որ

անգլերենում բացակայում է ածականի հոլովը, սեռը և թիվը: Օրինակ համեմատենք любимый-favourite, любимого-favourite, любимыми-favourite. Հայ և ռուս աշակերտների համար դժվարություն են առաջացնում անգլերենի 16 ժամանակաձևերի կիրառումը խոսքում: Շատ հաճախ այն դժվարություն է առաջացնում տարատեսակ տեքստեր թարգմանելիս: Հայերենի հետ անգլերենի ընդհանրությունը հոդերի հաճախակի օգտագործումն է, ինչը բացակայում է ռուսերենում և տեքստ թարգմանելիս աշակերտի համար այն դժվարություն է առաջացնում: Ռուսերենում և անգլերենում նմանություն ունի գոյականի թիվը: Այդ երկու լեզուներում կան մի շարք գոյականներ, որոնք չեն օգտագործվում եզակի թվով և գոյականներ, որոնք չեն օգտագործվում հոգնակի թվով, այսինքն անեզական և անհոգնական գոյականներ: Միայն եզակի թվով են օգտագործվում օրինակ՝ свобода- freedom, сахар-sugar, вода- water գոյականները. Միայն հոգնակի թվով են օգտագործվում очки- glasses, брюки- trousers, ножницы- scissors գոյականները: Սակայն կան շատ գոյականներ, որոնց ռուսերենում օգտագործվում են միայն եզակի թվով, իսկ անգլերենում՝ հոգնակի և ընդհակառակը:

3. Շարահյուսություն և կետադրություն. Ռուսերենի և անգլերենի կետադրական կանոնները նման են: Օրինակ՝ կոչականները տրոհում են ստորակետով, իսկ, բայց շաղկապներից առաջ դրվում է ստորակետ: Ռուսերենի և անգլերենի հարցական և բացականչական նշանները տրոհվում են նույն ձև: Տարբերություններից կարող ենք նշել այն, որ ռուսերենում շարահյուսությունը ազատ է, այսինքն նախադասությունը կարող է սկսվել տեղի պարագայից, սակայն անգլերենում շարահյուսությունը կայուն է. ենթակա, ստորոգյալ հետո արդեն խնդիրներն ու պարագաները: Անգլերենում նախադասությունը պարտադիր պետք է ունենա ենթակա և ստորոգյալ, իսկ ռուսերենում նախադասությունը կարող է ունենալ կամ միայն ենթական կամ միայն ստորոգյալ: Օրինակ. She is a teacher- Она учительница, անգլերենից թարգմանելիս այս նախադասությունը կհնչի այսպես. Она есть учительница:

Հետազոտության համար ընտրել ենք 7- րդ դասարանի Существительные, употребляющие только в единственном или только во множественном числе թեման: Ներկայացնենք տվյալ դասի պլանը:

Դասարան` 7

Թեման` Существительные, употребляющие только в единственном или только во множественном числе

Դասի տեսակը` ինտեգրված (ռուսերեն և անգլերեն)

Անհրաժեշտ նյութեր` գրատախտակ, գիրք, աղյուսակ, իրեր, որոնք բաղկացած են երկու մասից (մկրատ, ակնոց)

Նպատակը`

- իմանալ այն գոյականների ցանկը, որոնք օգտագործվում են միայն եզակի կամ միայն հոգնակի թվով,
- գուգահեռներ անցկացնել երկու լեզուների մեջ,
- կիրառել այդ գոյականները նախադասություններում, երկխոսություններում, թարգմանել այն անգլերեն

Վերջնարդյունքներ.

- աշակերտը կիմանա այն գոյականների մասին, որոնք օգտագործվում են միայն եզակի կամ միայն հոգնակի թվով
- կկիրառի այդ գոյականները խոսքում
- կհամեմատի այդ գոյականները անգլերենում և հայերենում
- կանվանի այն աշխարհագրական անունները, որոնք օգտագործվում են միայն եզակի կամ միայն հոգնակի թվով

Աշխատանքի ձևը՝ անհատական և աշխատանք խմբերով

Միջառարկայական կապեր՝ անգլերեն, հայերեն, աշխարհագրություն

Դասի ընթացքը՝ տնային աշխատանքի ստուգում, ուսուցչի կողմից նոր դասի հաղորդում S- աձև աղյուսակի տեսքով ուսուցիչը ներկայացնում է այն գոյականների ցանկը, որոնք օգտագործվում են միայն եզակի կամ միայն հոգնակի թվով: Ձախ հատվածում ներկայացվում են այն գոյականները, որոնք օգտագործվում են միայն եզակի թվով, իսկ աջ հատվածում այն գոյականները, որոնք օգտագործվում են միայն հոգնակի թվով:

Միայն եզակի թվով օգտ. գոյականներ	Միայն հոգնակի թվով օգտ. գոյականներ
Мука	Очки
Любовь	Джинсы
Снег	Штаны
География	Весы
Золото	Ножницы

Վերը թվարկված գոյականները անգլերենում էլ են օգտագործվում նույն թվով:

Այսպես

Singularia tantum	Pluralia tantum
Flour	Glasses
Love	Jeans

Snow	Trousers
Geography	Scales
Gold	Scissors

Նախնական գիտելիքները ստուգելու համար աշակերտները խաղում են քերականական հետյալ խաղը գույգերով. աշակերտներից մեկը գոյական է անվանում, իսկ գույգը պետք է թարգմանի այն անգլերեն և հայերեն և նշի, թե ինչ տիպի գոյական է, արյոք այն բացի ռուսերենից նաև անգլերենում էլ է օգտագործվում նույն թվով:

Այնուհետև աշակերտները կատարում են վարժություններ: Դասարանում ընտրվում են թարգմանիչներ, որոնք թարգմանում են ռուսերենի տվյալ նախադասությունները անգլերեն և գտնում են օրինաչափություններ գոյականի թվի հետ կապված:

Աշակերտները կազմում են երկխոսություններ: Զույգերից մի քանիսը երկխոսության մեջ օգտագործում են միայն եզակի թվով օգտագործվող գոյականներ, իսկ մի քանիսը՝ հոգնակի:

Զրույց "Страны моей мечты" թեմայով: Աշակերտները պատմում են, թե որ երկրներում են եղել կամ որ երկրներում կցանկանան լինեն: Կարևոր է ուշադրություն դարձնել աշխարհագրական անունների օգտագործմանը, քանի որ կան անուններ, որոնք օգտագործվում են միայն եզակի կամ միայն հոգնակի թվով:

Տնային աշխատանք՝ վարժ. 33, 36

Դիտարկենք մեկ այլ թեմա. Степени сравнения прилагательных (The degrees of comparison of adjectives)

Դասարան` 7

Թեման` Степени сравнения прилагательных

Դասի տեսակը` ինտեգրված (ռուսերեն և անգլերեն)

Անհրաժեշտ նյութեր` գրատախտակ, գիրք, նկարներ

Նպատակը`

- իմանալ ածականների համեմատության աստիճանները
- զուգահեռականներ անցկացնել լեզուների միջև
- կիրառել ածականի դրական, բաղդատական և գերադրական աստիճանները նախադասություններում

Վերջնարդյունքներ`

- աշակերտը կիմանա ածականի համեմատության աստիճանները
- կկիրառի ածականները խոսքում
- կհամեմատի այդ ածականները անգլերենում և հայերենում
- կիմանա բացառությունները

Աշխատանքի ձևը` անհատական և խմբային

Միջառարկայական կապեր` անգլերեն, հայերեն

Դասի ընթացքը` տնային աշխատանքի ստուգում, ուսուցչի կողմից նոր դասի հաղորդում. Գրատախտակին գրվում են տարբեր ածականներ և նրանց համեմատության աստիճաններն ու դրանց թարգմանությունները, այնուհետև

աշակերտները ածականների համեմատության տարբեր աստիճանների միջոցով նկարագրում են մեկը մյուսին՝ չնշելով աշակերտին, իսկ մյուսները փորձում են գուշակել, թե ում մասին է խոսքը: Հետո աշակերտները կատարում են վարժություններ: Այնուհետև ուսուցիչը ցույց է տալիս աշակերտներին նկարներ և նրանք համեմատում են այդ առարկաները՝ օգտագործելով ածականի բաղդատական և գերադրական աստիճանները: Խմբային աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր խմբին տրվում է տեքստի մի հատված, որտեղից նրանք պետք է դուրս գրեն ածականները ու նշել, թե որ աստիճանով են դրանք օգտագործվել և թարգմանում են դրանք անգլերեն:

Տնային աշխատանք՝ սովորել աղյուսակի կանոնները, վարժություն 90, 91

Ռուսերենում և անգլերենում կան երեք համեմատության աստիճաններ: Ռուսերենում և անգլերենում ածականի համեմատության աստիճանը կազմում են ավելացնելով վերջածանցներ: Անգլերենում միավանկ բառերի վերջում ավելացնում ենք *er, est*, իսկ բազմավանկի դեպքում՝ *more, most*: Այսպես. *long- longer- the longest, cold- colder- the coldest, comfortable- more comfortable- most comfortable, difficult- more difficult, most difficult*. Սակայն ռուսերենում հիմնականում ավելացնում ենք *e, ee*՝ բաղդատական և *самый* բառը գերադրական աստիճանի համար: Սակայն երկու լեզուներում էլ կան բացառություններ: Լավ, վատ բառերի բաղդատական և գերադրական աստիճանները կազմվում են արմատի փոփոխությամբ.

good- better- the best

хороший- лучше- самый лучший

bad- worse- the worst

плохой- хуже- самый худший

Ինչպես տեսնում ենք երկու լեզուներում էլ կան շատ ընդհանրություններ և տարբերություններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքում եկանք այն եզրահանգման, որ միջառարկայական կապերը ուսուցման ընթացքը դարձնում են ավելի արդյունավետ, մոտիվացնում են աշակերտներին, հետաքրքրություն են մտցնում ուսուցման ընթացքում:

Ռուսաց լեզուն կապված է գրեթե բոլոր առարկաների հետ՝ հայերեն, անգլերեն, պատմություն, աշխարհագրություն, կենսաբանություն: Մեր հետազոտության ընթացքում ցույց ենք տվել կապը անգլերենի հետ: Եվ, չնայած երկու լեզուներն էլ բավականին տարբեր են, սակայն երկու լեզուներում էլ կան բազում ընդհանրություններ, որոնք հեշտացնում են աշակերտների ուսուցումը: Երկու լեզուներում էլ կան իրար նման հնչողությամբ բազմաթիվ բառեր, որոնք փոխառություններ են այլ լեզուներից: Խոսքի մասերի շատ կանոններ ունեն ընդհանրություններ:

Այսպիսով եկանք այն եզրահանգման, որ

- միջառարկայական կապերը հեշտացնում են ուսուցումը
- մեկ առարկայից ունեցած գիտելիքները օգնում են մյուս առարկայի նոր նյութի յուրացմանը
- միջառարկայական կապերի կիրառումը օգնում է ակտիվացնել տարբեր առարկաների մանկավարժների համագործակցությունը
- միջառարկայական կապերի կիրառման դեպքում առարկաները սկսում են միմյանց «օգնել»
- ռուսերենի և անգլերենի կապը օգնում է թարգմանչական աշխատանքի հարցում և կատարելագործում է աշակերտի թարգմանչական հմտությունները

Այս թեման միջոց կմնա արդիական և միջառարկայական կապերի շնորհիվ
կկատարելագործվի ուսումնադաստիարակչական գործընթացը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մելանյա Աստվածատրյան, Անահիտ Արնատուդյան, Սիրամարգ Վարդումյան, Իգարելլա Օհանովա, Ռուբեն Պետրոսյան, Լենա Երեմյան «Ինտեգրված թեմատիկ միավորներ», Երևան, 2003, 256 էջ
2. Чепиков М. Г. Интеграция науки, М., Мысль, 1988, 135 с.
3. <https://krtahartak.am/courses/obligatory/course-018/lessons/%D5%B4%D5%AB%D5%BB%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A1%D5%BA%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AF%D5%AB%D6%80%D5%A1%D5%BC%D5%B4%D5%A1%D5%B4%D5%A2-%D5%AB%D5%B6%D5%BF/?fbclid=IwAR0k3W7A0P41QS2cqp4koDBFyh0KSeCyI9MmSXImuuYobwtZSauB24yuG4>
4. <https://hy.studiovladimirs.cz/tipyi-i-formyi-urokov-formyi-provedeniya-urokov-istorii-izo-chteniya-okrujayuscwego-mira-2a484b0?fbclid=IwAR2Ui7kmtD3ybyvcLCCzJz9tQqlQ39c2VQIxr4ND1eXX68QP1PFmiE4kv50>
5. <https://hkls.ru/hy/self-development/mezhpredmetnaya-integraciya-celi-zadachi-principy-doc-mezhpredmetnye.html?fbclid=IwAR0H7-t3kiFIGublsPzqTfW8-1CDQJBKojMU1kyLQ5ZGT0dPwb0GJaT1GA>
6. https://www.edu.gov.mb.ca/k12/docs/support/currconn/definitions.html?fbclid=IwAR0MEw_AfPZRAoJ5W4k4wUHDwS9XB3WThiVZMOwOLbYJmjcSuE4WooqpkY#:~:text=In%20a%20multidisciplinary%20or%20a,together%20different%20subject%20are%20perspectives
7. <https://hasmiktopchyan.wordpress.com/2016/09/25/%D5%B4%D5%AB%D5%BB%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D5%AF%>

[D5%A1%D5%B6-
%D5%AF%D5%A1%D5%BA%D5%9D%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%8
2%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6-
%D5%B0%D5%A1%D5%BB%D5%B8%D5%B2%D5%B8/?fbclid=IwAR1OjezFREUh
qYPjCCr3lniJyZAvRmCf6Z5jBcp0n4liPoBhJV1sd9YgGe4](#)

8. [https://www.teachforyou.org/%D5%84%D5%AB%D5%BB%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-
%D5%AF%D5%A1%D5%BA%D5%A5%D6%80%D5%AB-
%D6%85%D5%A3%D5%BF%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B
8%D6%82%D5%B4-
%D5%AB%D5%B6%D5%BF%D5%A5%D5%A3%D6%80%D5%BE%D5%A1%D5%A
E-%D5%A4%D5%A1%D5%BD%D5%A5%D6%80%D5%AB-
%D5%AF%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A5%D6%80%D5%B
A%D5%B8%D6%82%D5%B4?fbclid=IwAR1Wl udPKS9uSb-
4HDgrobe9KES7jXNA4vGnj38LeXh THsR-3pGo5UfV8](https://www.teachforyou.org/%D5%84%D5%AB%D5%BB%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%AF%D5%A1%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-
%D5%AF%D5%A1%D5%BA%D5%A5%D6%80%D5%AB-
%D6%85%D5%A3%D5%BF%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B
8%D6%82%D5%B4-
%D5%AB%D5%B6%D5%BF%D5%A5%D5%A3%D6%80%D5%BE%D5%A1%D5%A
E-%D5%A4%D5%A1%D5%BD%D5%A5%D6%80%D5%AB-
%D5%AF%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A5%D6%80%D5%B
A%D5%B8%D6%82%D5%B4?fbclid=IwAR1Wl udPKS9uSb-
4HDgrobe9KES7jXNA4vGnj38LeXh THsR-3pGo5UfV8)

